

Ռեկորդային տեղումներ ԱՄՆ-ում



2

Համառոտություններ ու անտեր վերելակներ



4



6

Աշխարհի վերջը հետաձգվում է



8

Ուսուցանված ու վտանգավոր

ISSN 1829-149X



9 771829 149003

ով իրագրված է, նա լուստանված է

Արտակարգ

N 4 (325)

12.2.2010 - 18.2.2010

www.emergency.am

Հայաստանում ՄԱԿ-ի նոր համակարգողը



Առաջինը Փրկարար ծառայությունն էր

Հայաստանում ՄԱԿ-ի նոր համակարգող, ՄԱԶԾ մշտական ներկայացուցիչ Դաֆինա Գերչեան կառավարման մարմինների ղեկավարների հետ հանդիպումների շարքն սկսեց Հայաստանի փրկարար ծառայության տնօրեն, Արտակարգ իրավիճակների նախարարի առաջին տեղակալ, գեներալ լեյտենանտ Էդիկ Բարսեղյանի հետ հանդիպումով:

Փետրվարի 5-ին ՄԱԿ-ի համակարգողը մասնակցեց նաև համակարգի կարիքների գնահատման վերջնական փուլին, երբ արդեն հավաքված տվյալները ներկայացվեցին միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներին:

- Կարողությունների այս գնահատմանը մի մասն է կարողությունների զարգացման այն ծրագիր, որ մենք իրագործելու ենք արտակարգ իրավիճակների նախարարության և ոլորտի մյուս այն կառույցների հետ միասին, որոնք լուստանված են անհրաժեշտ ջանքեր գործադրել՝ աղետների ռիսկերը կտրուկաբար համար, - Ընել է Գերչեան:

Տիկին Դաֆինա Գերչեան Հայաստանում ՄԱԿ-ի մշտական համակարգողի և ՄԱԿ-ի զարգացման ծրագրի մշտական ներկայացուցչի պաշտոնը ստանձնել է 2010 թվականի հունվարի 10-ին:

Նա տնտեսագիտության բակալավր է, քաղաքական տնտեսագիտության և սոցիոլոգիայի մագիստրոս, իսկ թեկնածուական թեզը պաշտպանել է Բնապահպանական տնտեսագիտության ոլորտում՝ Սոֆիայի Ազգային և համաշխարհային տնտեսագիտության համալսարանում: Տիկին Գերչեան իրավիճակի հետազոտող է եղել Օբսերվորի (Լոնդոնի Քուեյ) և Գլոբալ Կարոլինայի (Չապել Հիլ, ԱՄՆ) համալսարաններում:

Տիկին Գերչեան տնտեսագիտության պրոֆեսորի ավագ օգնական է եղել Սոֆիայի տեխնիկական համալսարանում՝ որպես USIA Ֆուլբրայթի փոխանակման ծրագրի գիտաշխատող և խորհրդատվություն է իրականացրել բնապահպանական տնտեսագիտության, կառավարման և տեղական զարգացման ու սպասկենտրոնացման ոլորտներում:

Նա խոշոր կազմակերպչական, ակադեմիական և գործնական փորձ ունի, ինչպես նաև հեղինակ ու համահեղինակ է տասնութ իրապարակումների՝ կարողությունների զարգացման, կայունության, տնտեսական ու բնապահպանական խնդիրների վերաբերյալ:

Տիկին Գերչեան ՄԱԿ-ում աշխատանքի ավելի քան 16 տարվա փորձ ունի: Այս համակարգում նա մի շարք ղեկավար պաշտոններ է զբաղեցրել՝ Եվրոպայի և ԱՊՀ

երկրներում: Տիկին Գերչեան ՄԱԶԾ Բրատիսլավայի տարածաշրջանային աջակցման կենտրոնում 2002-2009 թվականներին զբաղեցրել է Կարողությունների զարգացման խորհրդատուի և իրականացման ղեկավարի պաշտոնը:

Տիկին Դաֆինա Գերչեան բուլղարուհի է: Ամուսնացած է, ունի երկու երեխա:

Նա ազատ խոսում է անգլերեն և ռուսերեն, լավ հասկանում է մակեդոներեն, սերբերեն և խորվաթերեն:

«Արտակարգ ալիքին» հյուր

Փետրվարի 12-ին տիկին Դաֆինա Գերչեան կայցելի նաև «Արտակարգ ալիք» լրատվական կենտրոն: Մեծ նշանակություն տալով աղետների կառավարման ոլորտի՝ հատկապես հանրային իրազեկման բաղադրիչին, ՄԱԿ-ի համակարգողը ցանկություն է հայտնել առավել խորությամբ ծանոթանալ կենտրոնի իրականացրած, ընթացիկ ու ապագա ծրագրերին, «Արտակարգ ալիք» հաղորդաշարի ստեղծման պայմաններին ու հնարավորություններին:

Տիկին Գերչեայի այցի մասին, ինչպես նաև նրա հետ հարցազրույցը, կարդացեք հաջորդ փետրվարի 22-ի համարում:

«Արտակարգ ալիք» հեռուստահաղորդում

- Հայ փրկարարների առօրյայից:
- Ինչու հայ փրկարարները չեն կենցիկ Հայիթի:
- Մեծ ծրագիր սկսելուց առաջ ՄԱԿ-ը գնահատեց Արտակարգ իրավիճակների նախարարության, նրա բոլոր ստորաբաժանումների կարողությունները:



• Ինչ տեսակի կրակմարիչներ կան, և ինչպես կարելի է օգտագործել կրակմարիչը: Խորհուրդ են տալիս պետական իրադեպային տեսչության աշխատակիցները:

• Առաջին օգնության հանրագիտարան. ցրտահարություն:

Այս և այլ ուշագրավ թեմաների մասին՝ ուրբաթ, փետրվարի 12-ին, 23:50-ին՝ Շանթի եթերում: Կրկնությունը՝ շաբաթ, 9:10-ին և կիրակի, 12:20-ին:

«Էլիտ գրուպ» կյանքի նոր որակ



Սեյսմակայուն էլիտար շինարարության առաջատարը տարածաշրջանում

E-mail: info@elitegroup.am; URL: www.elitegroup.am

Հակասեյսմիկ համակարգերի միջազգային ասոցիացիայի անդամ «Էլիտ Գրուպ» ընկերությունը տարածաշրջանի առաջատարն է սեյսմակայուն շինարարության ոլորտում: Առաջին անգամ Հայաստանում «Էլիտ Գրուպ» շենքերում սկսեցին կիրառել ռետինամետաղյա շերտավոր բարձիկներ, որոնցով երկնաքերներ են կառուցում ճապոնիայում, ԱՄՆ-ում, Չինաստանում և այլուր:

«Էլիտ Գրուպ» միակ ընկերությունն է Հայաստանում, որն արժանացել է միջազգային հեղինակավոր վկայականների՝ կառավարման, աշխատանքի պաշտպանության և անվտանգության ոլորտներում:

«Էլիտ Գրուպ»՝ բնակելի, առևտրային, առողջարանային ու հյուրանոցային համալիրներ, ամբողջական թաղամասեր, տարածաշրջանային ծրագրեր, տեղական ու միջազգային հեղինակավոր ու հուսալի գործընկերներ:

Ճիշտ կառավարումը գիտություն է, իսկ «Էլիտ Գրուպ» կառավարվում է գիտնականների կողմից:

Երեւան, Պուշկինի 21, ☎ 56-69-22, 56-69-33:



Քայաստանի փրկարար ծառայությունը գանգահարեք 1-01, 1-12

Ձյանը՝ գերի

Փետրվարի 5-ին, ժամը 09.40-ին Գեղարքունիքի մարզից ստացված տեղեկության համաձայն՝ Գավառ-Մարտունի ավտոճանապարհի 4-րդ կիլոմետրում, ձյանը քիչ քանակությամբ, երկու ավտոմեքենա դուրս են եկել ճանապարհի երթևեկելի մասից և հայտնվել ձյան տակում։

Դեպքի վայր է մեկնել Գավառի հրշեջ-փրկարար ջոկատի օպերատիվ խումբը։ Փրկարարների ուժերով ձյան միջից ճանապարհի երթևեկելի հատված են դուրս բերվել «ՎԱԶ-2106» մակնիշի 20 LU 228 և «ՌԻԱԶ» մակնիշի 11 OL 140 պետհամարանիշների ավտոմեքենաները և շարունակել ընթացքը։

Փետրվարի 5-ին, ժամը 11.00-ին նույն մարզից ստացված ահազանգի համաձայն՝ Գավառ-Սեւան ավտոճանապարհի 7-րդ կիլոմետրում ձյանը քիչ քանակությամբ ավտոմեքենա է հայտնվել ձյան տակում։

Դեպքի վայր մեկնած մարզային փրկարարական վարչության փրկարարների ուժերով «ՎԱԶ-53» մակնիշի 68 LO 155

պետհամարանիշի ավտոմեքենան դուրս է բերվել ճանապարհի երթևեկելի մաս և շարունակել ընթացքը։

Թունավորում շնու գազից

Փետրվարի 8-ին, ժամը 11.30-ին Գյումրիի շտապօգնության ծառայությունից տեղեկություն է ստացվել, որ շնու գազից թունավորումով «Սամարիթեր» հիվանդանոց են տեղափոխվել նույն քաղաքի Պ. Սեւակի 17/4 հասցեի բնակիչներ՝ 1990 թ. ծնված Տաթևիկ և 1965 թ. ծնված Գեորգ Ղազարյանները, 1959 թ. ծնված Գալյա և 1954 թ. ծնված Սամվել Սարգսյանները և 1967 թ. ծնված Հասմիկ Այվազյանը։

Ըստ բժիշկների՝ տուժածների վիճակը միջին ծանրության է։

Բախվել են մարդափարս ու բռնաբարը

Փետրվարի 9-ին, ժամը 12.19-ին ահազանգ է ստացվել, որ Կապան-Գորիս ավտոճանապարհի 15-րդ կիլոմետրում տեղի է ունեցել ճանապարհատրանսպորտային պատահար, եւ անհրաժեշտ է փրկարարների օգնությունը։

Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ։

Դեռեւս չպարզված հանգամանքներում «ՎԱԶ-2121» մակնիշի 633 SU 51 պետհամարանիշի ավտոմեքենան բախվել է «ԿամԱԶ» մակնիշի 103 SU 51 պետհամարանիշի բեռնատարին (վարորդ՝ 1966 թ. ծնված Լեւոն Խուրշուդյան)։

Պատահարի հետեւանքով «ՎԱԶ-2121» մակնիշի ավտոմեքենայի վարորդ, Կապան քաղաքի բնակիչ, 1969 թ. ծնված Ա. Մարտիրոսյանը ստացել է տարբեր մարմնական վնասվածքներ և տեղափոխվել Գորիսի հիվանդանոց։

Ըստ բժիշկների՝ տուժածի վիճակը բավարար է։

Շաբաթվա ընթացքում հանրապետության տարածքում արձանագրվել է տարաբնույթ հրդեհների 21 դեպք։

Հրդեհ «Դալմայի այգիներում»

Փետրվարի 4-ին, ժամը 18.37-ին ահազանգ է ստացվել, որ հրդեհ է բռնկվել Երեւանի Ծովակալ Իսակովի պողոտային հարակից «Դալմայի այգիներում»։

Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ։ Հրդեհը մեկուսացվել է ժամը 19.03-ին, մարվել՝ 19.10-ին։

Այրվել է 1000 քմ մակերեսով եղեգնուտ։

Այրվել են հաշվիչներ

Փետրվարի 4-ին, ժամը 20.52-ին ահազանգ է ստացվել, որ հրդեհ է բռնկվել Երեւանի Շահունյան 16-րդ փողոցի թիվ 105 տան մոտակայքում։

Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ։ Հրդեհը մեկուսացվել է ժամը 21.09-ին, մարվել՝ 21.11-ին։

Այրվել է մեկ էլեկտրասյուն՝ մասամբ, հաշվիչների վահանակը և 20 հաշվիչ։

Հրդեհ՝ փլուզման հետեւանքով

Փետրվարի 5-ին, ժամը 02.42-ին ահազանգ է ստացվել, որ հրդեհ է բռնկվել Երեւանի Արշակունյաց պողոտայի 22-րդ շենքին հարակից թիվ 228 էլեկտրական ենթակայանում։ Դեռեւս չպարզված հանգամանքներում՝ մասնակի փլուզվել է էլեկտրական ենթակայանի տանիքը, ինչի հետեւանքով տեղի է ունեցել լարերի կարճ միացում, եւ հրդեհ է բռնկվել։

Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ։

Հրդեհը մեկուսացվել է ժամը 03.23-ին, մարվել՝ 03.33-ին։

Այրվել է 1 քմ մակերեսով աղբ։

Հրդեհ ավտոմեքենայում

Փետրվարի 5-ին Լոռու մարզից տեղեկություն է ստացվել, որ ժամը 23.06-ին հրդեհ է բռնկվել Ստեփանավան քաղաքի Երիտասարդական փողոցով ընթացող ավտոմեքենայում։

Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական

հաշվարկ։

Հրդեհը մեկուսացվել է ժամը 23.15-ին, մարվել՝ 23.50-ին։

Այրվել է 4. Ջուլիակյանին պատկանող «Օպել Վեկտրա» մակնիշի PAD 493 պետհամարանիշի ավտոմեքենան՝ մասամբ։

Հրդեհ քուլեջում

Փետրվարի 7-ին Շիրակի մարզից տեղեկություն է ստացվել, որ ժամը 06.50-ին հրդեհ է բռնկվել Գյումրիի Օլիմպիական հերթափոխի քուլեջի տարածքում։

Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ։ Հրդեհը մեկուսացվել է ժամը 07.27-ին, մարվել՝ 08.22-ին։

Այրվել են քուլեջի հանդերձարանը, ծանրաձողի դահլիճը, միջանցքը, սանհանգույցը, գույքը՝ 101 քմ ընդհանուր մակերեսով։

Հրդեհ սրճարանում

Փետրվարի 8-ին, ժամը 19.46-ին ահազանգ է ստացվել, որ հրդեհ է բռնկվել Երեւանի Սեբաստիայի 32 հասցեին հարակից այգում։

Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ։ Հրդեհը մեկուսացվել է ժամը 19.55-ին, մարվել՝ 20.17-ին։

Այրվել է այգում գտնվող սրճարանի փայտե տաղավարը՝ 9 քմ մակերեսով։

Հրդեհ փանիքում

Փետրվարի 11-ին, ժամը 02.32-ին ահազանգ է ստացվել, որ հրդեհ է բռնկվել Շիրակի մարզում՝ յումրիի Տրոյատ ճարտարապետ փողոցի թիվ 14ա շենքում։

Դեպքի վայր է մեկնել երկու մարտական հաշվարկ, քիչ անց՝ օգնության կարգով հրդեհի վայր է ուղեւորվել եւս մեկ մարտական հաշվարկ։ Հրդեհը մեկուսացվել է ժամը 03.32-ին, մարվել՝ 04.20-ին։

Այրվել է շենքի տանիքը՝ 200 քմ մակերեսով։

Գոհար Բաղդասարյան

միջազգային լուրեր

Ռեկորդային տեղումներ ԱՄՆ-ում

Սեկ շաբաթվա ընթացքում ԱՄՆ-ի արեւելյան հատվածում ձյան ռեկորդային տեղումներ են գրանցվել։ Առատ ձյան պատճառով երեք օր շարունակ ԱՄՆ-ի պետական հաստատությունները չեն աշխատել։ Միայն մեկ օր չափափակ վնասը կազմում է մոտ 100 միլիոն դոլար։ Ձյան պատճառով փակ է նաեւ Նյու Յորքում գտնվող ՄԱԿ-ի կենտրոնակայանը։



Տեղի իշխանությունների հաղորդած տվյալներով՝ Նյու Յորքում ձյան շերտի բարձրությունը հասնում է 36 սմ-ի, Բալթիմորում՝ 51 սմ-ի, Ֆիլադելֆիայում՝ 48-ի։ Դալասի միջազգային օդանավակայանում տեղացած ձյան շերտը

հասել է 82 սմ-ի և գերազանցել 1996 թվականին գրանցված 59 սանտիմետրանոց ռեկորդը։

Մայրաքաղաք Վաշինգտոնում չեն աշխատում ավտոբուսները, մետրոն գործում է միայն ստորգետնյա հատվածներում, փակ են դպրոցները, օդանավակայանները։

Մերիլենդ, Վիրջինիա և Դելավեր նահանգներում ձյանը քիչ քանակությամբ հայտարարվել է արտակարգ դրություն։ Այս նահանգներում ձյան շերտի բարձրությունը հասնում է 90 սմ-ի։

Վատ եղանակն արդեն դարձել է մոտ տասը մարդու մահվան պատճառ, հիմնականում ճանապարհատրանսպորտային պատահարների հետեւանքով։

Ջանգվածային թունավորում

Յակուտիայում աղիքային սուր թունավորման ախտանիշներով հիվանդանոց է տեղափոխվել մոտ 300 մարդ։ Ռուսական լրատվամիջոցների հաղորդմամբ՝ թունավորվածներից 179-ը երեխաներ են։ Արդեն հայտնի է, որ մարդիկ թունավոր-

վել են ժամկետանց՝ թթված կաթնամթերքից։

Առողջապահության նախարարության համապատասխան բաժինը Յակուտիայում սկսել է իրականացնել սանիտարափոխ-ենիկ ստուգումներ։ Մասնավորապես, ստուգումներ են կատարվել տեղի կաթի գործարանում, որտեղ էլ խախտումներ են հայտնաբերվել։ Արդեն մի քանի օր է՝ գործարանը դադարեցրել է աշխատանքը։

Չնարուք Աֆղանստանում

Ավելի քան 150 մարդ է զոհվել Աֆղանստանի Սալանգ լեռնանցքում՝ առատ ձյան պատճառով։ Հարյուրավոր մարդիկ ստացել են տարբեր աստիճանի վնասվածքներ։

Փրկարար ջոկատներին, ոստիկանությանը և միջազգային կոալիցիոն ուժերին հաջողվել է փրկել երկու հազարից ավելի մարդու կյանք։ Թեև տեղումները խոչընդոտում են փրկարարների աշխատանքը, սակայն որոնողափրկարարական աշխատանքները լեռներում շարունակվում են։

Անթալիան հեղեղվել է

Թուրքիայի Անթալիա նահանգում փետրվարի 7-ից սկսած հորդառատ անձրեւների է ուժեղ



քամու հետեւանքով զոհվել է երեք մարդ, եւս մեկը համարվում է անհետ կորած։ Ջրի տակ են անցել բազմաթիվ բնակելի տներ և հողատարածքներ, քանդվել են կամուրջներ, փակվել է Անթալիա-Մանավաթ մայրուղին։

Իրականացվում են վերականգնողական աշխատանքներ։

Պայթյուն էլեկտրակայանում

Փետրվարի 7-ին ԱՄՆ-ի «Քլին Էներջի» էլեկտրակայանի տարածքում գտնվող գազամուղում հզոր պայթյուն է որոտացել։ Վերջին տվյալներով՝ զոհվել է հինգ մարդ, ավելի քան հիսունը ստացել են լուրջ մարմնական վնասվածքներ։

Պայթյունն այնքան ուժեղ է

եղել, որ լսվել է հարեւան մի քանի քաղաքներում, իսկ ծխի ամպը տեսանելի է եղել մի քանի կիլոմետր հեռավորությունից։ Պատահարի պահին էլեկտրակայանում կար 250 մարդ։

Պապահար Բալթիկ ծովում

Շաբաթ օրը ֆիննական բեռնատար նավից Բալթիկ ծով է ընկել մի կոնտեյներ, որում եղել է 20 տոննա վնասակար նյութ։ Այս մասին հայտնում են ռուսական լրատվամիջոցները։ Այժմ Շվեդիայի ծովային անվտանգության ծառայությունը իրականացնում է ծովն ընկած կոնտեյների որոնումները։



Բեռնատար նավն ուղեւորվում էր Ռոտերդամից Սանկտ Պետերբուրգ։ Հայտնի է նաեւ, որ նավից ընկել է երեք կոնտեյներ, երկուսի պարունակությունը դեռեւս պարզ չէ։

Ֆաինա Թյունիբայան



Հաղորդում է ԼՂՀ Փրկարար ծառայությունը

2010 թ. հունվար

Հունվարի 3-ին ուժեղ քամու հետևանքով տարբեր չափերի վնասներ է կրել Ստեփանակերտ քաղաքի ու ԼՂՀ շրջանների՝ ընդհանուր թվով 30 համայնք: Հունվարին գրանցվել է հրդեհների բռնկման 13 դեպք, ամբողջությամբ այրվել է մեկ բնակելի տուն (Ասկերանի շրջ. Այգեստան գյուղում): Ձոռեր եւ վիրավորներ չկան:

Գրանցվել է ճանապարհատրանսպորտային պատահարների 4 դեպք, զոհեր չկան, տարբեր աստիճանի վնասվածքներ է ստացել 3 քաղաքացի:

Գրանցվել է ականների եւ այլ չպայթած զինամթերքի հայտնաբերման 6 դեպք: Հայտնաբերված զինամթերքը ոչնչացվել կամ վնասագերծվել է: Ձոռեր եւ տուժածներ չկան:

Գրանցվել է կենցաղային բնույթի 15 կանչ: Բոլոր դեպքերում փրկարարների կողմից ցուցաբերվել է անհրաժեշտ օգնություն:

Փետրվարի 1-11

Հրդեհներ

Փետրվարի 2-ին հրդեհ է բռնկվել Ստեփանակերտի Ն. Ստեփանյան փողոցի թիվ 25 հասցեում: Այրվել է 400 մ² մակերեսով չոր խոտ եւ թփուտ:

Նույն օրը հրդեհ է բռնկվել Ստեփանակերտի Թունանյան փողոցի թիվ 55 բնակելի տանը: Դեպքի

վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ: Հրդեհի արդյունքում այրվել է սառնարան, զգեստապահարան՝ շորերով, 2 մ² մակերեսով փայտյա կառուցվածք:

Փետրվարի 6-ին, ժամը 18:30 հրդեհ է բռնկվել Մարտունի քաղաքի Արզումանյան փողոցի թիվ 3 բնակելի տանը: Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ: Այրվել է 2 փայտե մահճակալ՝ իր գույքով:

Առատ ձյան հետևանքով

Փետրվարի 5-ին ԼՂՀ տարածքում տեղացած ուժեղ ձյան հետևանքով հոսանքազրկվել են մայրաքաղաք Ստեփանակերտի եւ Շուշի քաղաքի որոշ թաղամասեր, ինչպես նաեւ ԼՂՀ շրջանների 26 համայնք: Նշված բոլոր համայնքներում էլեկտրամատակարարումը վերականգնված է:

Ձենք-զինամթերք

Փետրվարի 3-ին Քաշաթաղի շրջանի Բերձոր քաղաքի 4-րդ թաղամասում հայտնաբերվել է զնդիկավոր բեկորային ավիառումբ: Վտանգավոր գտածոն վնասագերծվել է ՓԾ սակրավորների կողմից:

ԼՂՀ ՓԾ տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի բաժին

սեյսմիկ պաշտպանություն

Ս. թ. փետրվարի 4-ից 10-ը ՄՊԱԾ-ի սեյսմիկ կայանները Հայաստանի տարածքում 3 բալ եւ ավելի ուժգնությամբ գրանցել են մեկ երկրաշարժ: Այն տեղի է ունեցել փետրվարի 9-ին՝ Աշոցք գյուղից 9 կմ դեպի հյուսիս-արեւելք, եւ ուժգնությունն էպիկենտրոնային գոտում կազմել է 3 բալ:

Տարածաշրջանում. 3 բալ եւ ավելի ուժգնությամբ տեղի է ունեցել ութ երկրաշարժ: Փետրվարի 4-ին 4 բալ ուժգնությամբ երկրաշարժ է գրանցվել Թուրքիայում՝ Չալդրան քաղաքից 24 կմ դեպի արեւմուտք: Նույն օրը Ադրբեջանում՝ Մինգիչլու քաղաքից 5 կմ, իսկ Իրանում՝ Խոյ քաղաքից 32 կմ դեպի հյուսիս-արեւմուտք, տեղի են ունեցել 3 բալ ուժգնությամբ թույլ երկրաշարժեր: Փետրվարի 4-ին եւ 10-ին Վրաստանի Քվարելի քաղաքից համապատասխանաբար 7 կմ եւ 20 կմ դեպի հարավ-արեւելք գրանցվել է 3-4 եւ 4 բալ ուժգնությամբ երկրաշարժ: Փետրվարի 8-ին Ադրբեջանում, Գյանջա քաղաքից 19 կմ դեպի հյուսիս-արեւելք, տեղի է ունեցել 3 բալանոց

երկու սեյսմիկ ցնցում: Փետրվարի 10-ին Իրանի տարածքում, Ահաբ քաղաքից 30 կմ դեպի հյուսիս-արեւմուտք, գրանցվել է 4 բալ ուժգնությամբ երկրաշարժ:

Տարածաշրջանից դուրս. 6.0 եւ ավելի մագնիտուդով գրանցվել է երեք ուժեղ երկրաշարժ, որոնք տեղի են ունեցել խաղաղօվկիանոսյան օղակաձեւ հրե գոտում: Փետրվարի 5-ին 6.2 մագնիտուդով ուժեղ սեյսմիկ իրադարձություն է տեղի ունեցել խաղաղ օվկիանոսի հարավում: Հաջորդ օրը Ռուսաստանի Կուրիլյան կղզիների Կուրիլսկ քաղաքից 415 կմ դեպի հյուսիս-արեւելք գրանցվել է 6.0 մագնիտուդով ուժեղ երկրաշարժ: Փետրվարի 8-ին ճապոնական Ռյուկյու կղզեխմբի հարավ-արեւելյան շրջանում տեղի է ունեցել ուժեղ երկրաշարժ, որն ունեցել է 6.3 մագնիտուդ: Երկրաշարժի հետևանքով ցունամի չի առաջացել, ստորգետնյա ցնցումները զգացվել են Իսիգակի եւ հարակից կղզիներում:

ՄՊԱԾ գործակալություն

եղանակի տեսություն

Փետրվարի 5-10-ը դիտված հիդրոոդերեկաբանական պայմանները ՀՀ-ում

Համրապետությունում փետրվարի 5-6-ը դիտվել են տեղումներ՝ 5-10 մմ, առանձին լեռնային շրջաններում՝ 16-33 մմ քանակությամբ: Մնացած օրերին դիտվել է առավելապես առանց տեղումների եղանակ: Ամենաբարձր ջերմաստիճանը դիտվել է Արարատյան դաշտում, Սյունիքի հովիտներում՝ +6...+10 °C, Տավուշում, Լոռիում, Սյունիքի նախալեռներում, լեռնային շրջաններում՝ -3...+2 °C:

Ամենացածր ջերմաստիճանը գրանցվել է լեռնային շրջաններում՝ -11...-16 °C (Մասրիկ՝ -19 °C, Սեմյոնովկա՝ -18 °C), Լոռիում, Սյունիքի նախալեռներում, Արցախում՝ -8...-13 °C (Տաշիրում՝ -20 °C), Տավուշում, Արարատյան դաշտում, Սյունիքի հովիտներում՝ -4...-8 °C (Դիլիջանում՝ -13 °C):

Առաջիկա 5 օրվա եղանակի կանխատեսում

Փետրվարի 12-13-ին, ինչպես նաեւ 16-ին տեղ-տեղ սպասվում են տեղումներ ու մառախուղ: 14-15-ին սպասվում է առավելապես առանց տեղումների եղանակ: Քամին՝ հարավարեւմտյան՝ 3-8 մ/վրկ արագությամբ: Օդի ջերմաստիճանը 14-15-ին, եւ 16-ի գիշերը կբարձրանա 4-6 °C: Փետրվարի 12-ին նվազագույն ջերմաստիճանը Արարատյան դաշտում կտատանվի -2...+2 °C, Սյունիքի հովիտներում -1...+2 °C, Տավուշում՝ 0...-5 °C, Լոռիում՝ -1...-6 °C, Սյունիքի նախալեռներում՝ -1...-6 °C, լեռնային շրջաններում՝ -4...-9

°C սահմաններում: Առավելագույն ջերմաստիճանը Արարատյան դաշտում կտատանվի +4...+7 °C, Սյունիքի հովիտներում՝ +4...+7 °C, Լոռիում, Սյունիքի նախալեռներում՝ 0...+4 °C, Տավուշում՝ +1...+6 °C, լեռնային շրջաններում՝ -3...+2 °C սահմաններում: Երեւանում փետրվարի 12-13-ին եւ 16-ին հնարավոր են թույլ տեղումներ: 14-15-ին սպասվում է առանց տեղումների եղանակ: Օդի ջերմաստիճանը փետրվարի 12-ի գիշերը կտատանվի -1...-3 °C, ցերեկը +3...+5 °C սահմաններում:



22 փունժած դեռեւս հիվանդանոցում է

«Կաղ նժույգ» ակումբի այցելուներից 22-ը, այստեղ տեղի ունեցած հրդեհից հետո, դեռեւս գտնվում են հիվանդանոցում:

Դեկտեմբերի 5-ի գիշերն այս ակումբում հրդեհ էր բռնկվել, որը վերջին հիսուն տարվա մեջ ամենախոշորն էր Ռուսաստանում: Միայն այդ օրը զոհերի թիվն անցավ հարյուրից, եւս հիսունը հետագայում մահացան հիվանդանոցներում: Հրդեհն, ընդհանուր առմամբ, իւլեց 155 մարդու կյանք: Վերջին տվյալների համաձայն, մի քանի տուժած դեռեւս ծայրահեղ ծանր վիճակում են: Նրանք, ովքեր դուրս են գրվել, երկարատեւ բուժման կուրս պետք է անցնեն:

Ներկա պահին շարունակվում է հրդեհի փաստի ամնչությամբ հարուցված երկու քրեական գործերով հետաքննությունը: Առաջինի շրջանակներում պետք է պատասխանատվության ենթարկվեն ակումբի տերերը, իսկ երկրորդով անցնում են «Գոսպոժնադորի» ղեկավարն ու այդ գերատեսչության տեսուչները:

155 +1

64-ամյա Գենադի Բուդինը, որը երկար տարիներ սանիտար էր աշխատել Պերմի դիսհերձարանում, չարաբաստիկ դեկտեմբերի 4-ի երեկոյն որոշել էր անցկացնել տանը: Սակայն գիշերային անսպասելի զանգը խափանեց նրա ծրագրերը: Նրան շտապ կանչեցին աշխատանքի: Հարկավոր էր օգնել կոլեգաներին: Երկար տարիների աշխատանքային փորձ ունեցող Գենան շատ բան էր տեսել, բայց այդ օրվա տեսարաններն այնքան սարսափելի էին, որ նրա սիրտը չէր դիմացել: Գենադի Բուդինը մահացավ դիսհերձարան հասնելուց կես ժամ անց՝ ինֆարկտից:

Գրեթե մեկ ամիս՝ փլաքակներում

Հայիթիում ողջ մարդ է գտնվել, որը 27 օր անցկացրել է ավերված շենքի փլատակներում: Աղետի պահին՝ 28-ամյա Էվան Մունսին գտնվել է շուկայում, որտեղ բրինձ է վաճառել: Տղամարդուն գտել են հարազատներն ու տեղափոխել դաշտային հուպիտալ:

Մունսին պատմել է, որ փլատակներում ինչ-որ մեկն իրեն ջուր է տվել: Բայց բժիշկները չեն կարողանում հասկանալ, թե դա ով կարող է լինել, եւ տեղի ունեցածը հրաշք են համարում: Մունսին ծայրահեղ ջրազրկված է, բայց լուրջ վնասվածքներ չունի:

- Դժվար է հավատալ, բայց, ինչդեռ դարձվում է, անհնար ոչինչ չի լինում,- հայտարարել է բժիշկ Դաշյանտա Ջայավերան: - Տղամարդուն մեզ մոտ բերել են հարազատները: Նա ծայրահեղ ջրազրկված

է: Մենք նրան տեղավորել ենք ինտենսիվ թերապիայի բաժնում եւ ներախուսներ ենք անում: Կարծում են՝ նա կառողջանա:

Վերջին անգամ փլատակներից ողջ դուրս բերված մարդու մասին հայտարարվել է երկրաշարժից 15 օր անց: Այդ ժամանակ Պորտ-օ-Պրենսում ավերված շենքի տակից դուրս էր բերվել 17-ամյա մի աղջիկ: Դեռ այն ժամանակ փրկարարները դա իսկական հրաշք անվանեցին: Չնայած ջրազրկմանն ու ոտքերի վնասվածքներին, բժիշկները նրա վիճակը գնահատել էին բավարար:

Հզորագույն երկրաշարժը Հայիթիում տեղի ունեցավ այս տարվա հունվարի 12-ին: Վերջին տվյալների համաձայն, զոհվել է 212 հազար մարդ, եւ այդ թիվն օրեցօր մեծանում է: Վնասվածքներ են ստացել ավելի քան 300 հազարը, ավելի քան 1 միլիոն մարդ մնացել է անօթեւան: Ընդհանուր առմամբ տուժել է մոտ 3 միլիոն մարդ:



Համադիրություններ ու անարդյունավետ վերելակներ

Վերջին տարիներին անարդյունավետ վերելակների պատճառով առաջացած դժբախտ դեպքերն ավելի հաճախ են պատահում: Այդ դեպքերի հետևանքներն էլ բավական ծանր են լուրջ կոտորածներ ու վնասվածքներ, հաճախ՝ կյանքի հետ անհամատեղելի:

Հերթական վերելակային պատահարը հասարակությանը ցնցեց 2009 թվականի նոյեմբերի 25-ին: Երեւունի համայնքի խաղաղ Դոնի 19 շենքի 4-րդ մուտքի բնակչուհի՝ 34-ամյա Աղավճի Կիվրիկյանը անարդյունավետ վերելակի գոհ դարձավ:

Դեպքից երկու ամիս է անցել: Այս ընթացքում շենքի վերելակը չի գործել: Սակայն վերջերս, առանց վերանորոգելու, փորձել են նորից «աշխատեցնել» այն: Երեկվանից եկել են լիֆթը միացնելու: Հարցնում են՝ կա՞նք թույլատրություն, ո՞վ է թույլ սկսել, որ միացնեն: Դեմոնստրացիոն մույնիսկ ինժեները չի մտնում, հարցնի, թե ինչպես եղավ, որ հարս մահացավ: Մի անգամ տղայիս են կանչել, բա այդ տղայիս բա՞ն է լինում, - գայրացած ասում էր Աղավճի Կիվրիկյանի սկեռարարը:

Բայց տեսնում եմ, դժբախտ դեմոնստրացիոն մույնիսկ ինժեները չի գործել: Յուրաքանչյուր ամիս, միայն ստասարկման համար, ամեն բնակարան 500 դրամ գումար է վճարում, բայց չգիտեմ, թե ուր են գնում այդ փողերը: Կողմի են մտնում, վերելակի անսարքության դեմ ճանաչող 9-րդ հարկից 10-ամյա մի տղա ընկավ, հաճախում դարձավ:

ԱՆ Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոնի շարժասանդուղքների, վերելակների եւ ճոպանուղիների տեխնիկական անվտանգության գլխավոր փորձագետ Լուսինե Դավիթյանի խոսքերով՝ փորձը ցույց է տալիս, որ արտադրական պատահարներ, դժբախտ դեպքեր՝ մահվան ելքով կամ ծանր վնասվածքներով, հիմնականում տեղի են ունենում խցիկում փակված մնացած ուղեւորների ինքնատարհանման կամ պատահական, ոչ մասնագիտացված անձանց միջամտության պատճառով:

Եթե անդրադառնանք վերջերս տեղի ունեցած խաղաղ Դոնի 19 շենքի 4-րդ մուտքի մահացու ելքով դեմոնստրացիոն, առաջ կարող ենք ասել, որ վերելակը, լինելով գրանցված տեխնիկական անվտանգության արտադրական վստահության արժեքների դեմքերում, 2006 թ.-ից մինչ օրս չի անցել տեխնիկական անվտանգության փորձաքննություն: Վերելակը չունի հրամանով նշանակված թե՛ սարքի վիճակում օտարազորման, եւ թե՛ անվտանգ օտարազորման դասակարգում: Վերելակը տեխնիկական սարքի վիճակում չի եղել, - ասում է Լ.Դավիթյանը:

ԱՆ Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոնի տնօրեն Աշոտ Պետրոսյանն ասում է, որ մայրաքաղաքի եւ հանրապետության մյուս քաղաքների բազմաթիվ վերելակները, որոնք 50-60 տարի է՝ շահագործվում են: Նոր-նորը համայնքի համա-

տիրությունների աշխատանքները համակարգող համայնքային ոչ առեւտրային կազմակերպության խորհրդի նախագահ Սպարտակ Մաթեոսյանն ասում է, որ երբ թաղապետարանը համայնք էր եւ բյուջե ուներ, վերելակների վերանորոգման համար որոշակի ներդրումներ անում էր: Հիմա քաղաքապետարանն այդպիսի ներդրումներ չի անում:



Վերելակները վերանորոգման համար ծախսերը մեծ են, - ասում է Սպարտակ Մաթեոսյանը: Որպեսզի վերելակներն անխափան աշխատեն, հարկավոր է, որ տվյալ համատիրության դեմոնստրացիոն պայմանագիր կնքի որեւէ վերելակային ծառայության հետ՝ իրենց սպասարկման տարածքում գործող վերելակների անվտանգ շահագործման ու վերանորոգման նպատակով: Մայրաքաղաքի Նոր Նորք վարչական շրջանում, ի տարբերություն Դավիթյանի կամ Հարավ-Արեւմտյան զանգվածի, վերելակային դիպչեղանակի 4 կետ կա: Այս համայնքի բազմաթիվ վերելակներն անվտանգության 15 մեխանիկ: Նոր Նորք համայնքի համատիրությունների շուրջ 90 տոկոսի դեկավորները կնքել են համապատասխան պայմանագրեր վերելակային ծառայության հետ, իսկ մնացածները՝ օգտվողների կյանքը դեռեւս կախված է վերելակի մատուցած անակնկալներից:

Նոր Նորք վարչական շրջանի վերելակային ծառայության ճարտարագետ Գարեգին Խուրշուդյանն ասում է, որ իրենց կազմակերպությունը լիցենզավորված է եւ գործունեություն է ծավալում օրենքի շրջանակներում: Ներքին գործերի նախարարության կողմից արտադրված է վերելակի մատուցած անակնկալներից: Նոր Նորք վարչական շրջանի վերելակային ծառայության ճարտարագետ Գարեգին Խուրշուդյանն ասում է, որ իրենց կազմակերպությունը լիցենզավորված է եւ գործունեություն է ծավալում օրենքի շրջանակներում: Ներքին գործերի նախարարության կողմից արտադրված է վերելակի մատուցած անակնկալներից: Նոր Նորք վարչական շրջանի վերելակային ծառայության ճարտարագետ Գարեգին Խուրշուդյանն ասում է, որ իրենց կազմակերպությունը լիցենզավորված է եւ գործունեություն է ծավալում օրենքի շրջանակներում: Ներքին գործերի նախարարության կողմից արտադրված է վերելակի մատուցած անակնկալներից:

կենտրոնում: Իսկ այն համաժողովուրդ կամ լիազորված մարմինը, որը չի կնքել պայմանագիր, ստասարկվում է դասահական մարդկանց, այլ ոչ թե մեր մեխանիկների կողմից: Եւ թե ինչ վիճակում են այդ վերելակները, մենք տեղեկություն չունենումք, քանի որ դրանք մեր լիազորություններից դուրս են:

Վերելակային ծառայությունները կամ համատիրությունների դեկավորները, բացի վերելակային ծառայությունից, պարտավոր են պայմանագիր կնքել նաեւ տեխնիկական անվտանգության ազգային կենտրոնի հետ, որը տարին մեկ անգամ իրականացնում է վերելակի փորձաքննություն եւ տալիս եզրակացություն՝ յուրաքանչյուր վերելակի համար պահանջվող 2950 դրամ: Սա օրենքի պահանջն է:

ԱՆ տեխնիկական անվտանգության ազգային կենտրոնի շարժասանդուղքների, վերելակների եւ ճոպանուղիների տեխնիկական անվտանգության փորձագետ Լ. Դավիթյանը ասում է, որ վերելակի անվտանգության հանգույցներից առաջինը, որ ստուգում են փորձագետները, մեխանիկական փականներն են: Ի՞նչ է արվում այդ ժամանակ: Կանգնեցնում են վերելակը եւ փորձում են ձեռքի ուժի գործողությամբ բացել խցիկի դռները: Եթե դռները չեն բացվում, գործում է մեխանիկական բլոկավորումը, ուրեմն՝ վերելակը սարքին վիճակում է:

Երկու տարի առաջ կառավարությունը 3 միլիարդ դրամ գումար տրամադրեց մայրաքաղաքի վերելակային տնտեսության վերանորոգման համար: Վերանորոգվեց մոտ 2000 վերելակ, 38 նոր վերելակ տեղադրվեց, որոնք եւս, որքան էլ գարնանային է, այս երեք տարիների ընթացքում փորձաքննություն չեն անցել:

Այնպես որ, վերելակ մտնելը, ուշադիր եղեք: Նայեք, որ խցիկը տեղում լինի: Իսկ վերելակում փակված մնալու դեպքում զանգահարեք մասնագետի կամ էլ՝ փրկարարներին՝ 1-01:

Արմինե Գրիգորյան

Լավ սկիզբը ճանապարհի կեսն է

Հիմնվելով Արտակարգ իրավիճակների կառավարման ոլորտում Հայաստանի փրկարար ծառայության հետ նախկին համագործակցության հարուստ եւ արդյունավետ փորձի վրա, ՄԱԿ-ի Ջարգացման ծրագրի կարողությունների կառավարման խումբն այստեղ երկարաժամկետ ծրագրեր է իրականացնելու:

ԱՆ նախարար Միքեյիլ Ծախչյանի խոսքերով, Հայաստանի Հանրապետությունը, որպես տարածքով ու ռեսուրսներով ոչ մեծ երկիր, տվյալ ոլորտում առավել արդյունավետ կառավարման եւ առկա ռեսուրսների էլ ավելի արդյունավետ օգտագործման խնդիրը դիտարկում է որպես գերակայություն:

Վիճակագրության հետազա

նախարարություններն արդեն որոշված են, քանի որ համակարգի կարիքները գնահատվել են ու մեկտեղվել մեկ փաստաթղթում: Կազմակերպված քննարկումների ժամանակ ներկայացվել են նաեւ արտակարգ իրավիճակների նախարարության ստորաբաժանումների եւ Հայաստանի փրկարար ծառայության ներկայիս հնարավորությունները:

Նայել Զոուլսենը, ՄԱԶՓ փորձագիտական առաքելության խմբի անդամն, ասում է.

- Այն բոլոր տվյալները, որ մենք հավաքել ենք, շատ կարեւոր են: Եվ ես կցանկանայի շնորհակալություն հայտնել այն մարդկանց, նաեւ այլ երկրներում, որ օգնել են մշակել համապատասխան գործիք: Բայց այսօր ամենա-

կարեւորն այդ գործիքը, այդ օգտակար տվյալները ձեզ տրամադրել է:

ՄԱԿ-ի զարգացման ծրագրի փորձագետ Արա Նազիրյանը շարունակում է.

- Գործիքի հիմքում ընկած է Հյուսիսի գործողությունների շրջանակը, որին միացել է Հայաստանը: Դա ենթադրում է այն բոլոր կարողությունները, որ պետք է ունենան երկրները, որոնք ուզում են կամ ցանկություն ունեն գարգացնելու աղետների ռիսկերի նվազեցման կայուն համակարգ:

Աղետների ռիսկերի նվազեցման կայուն համակարգի մոդելը, ուր բաժանվել են համակարգի հնարավորություններն ու կարիքները, ՄԱԿ-ի գնահատող խումբը ներկայացրեց Հայաստանի



աղետների կառավարման թիմին, որի կազմում են երկուսն գործող գրեթե բոլոր միջազգային կազմակերպությունները:

Ունենալով աղետների ռիսկերի նվազեցման ինքնազարգացող

համակարգ, հնարավոր կլինի բարելավել արդյունավետ արձագանքման եւ վերականգնման հնարավորությունները: Ինչպես ասում են՝ լավ սկիզբը ճանապարհի կեսն է:



փրկարար

Յրշեջները համայնքներում

Schweizerische Eidgenossenschaft
Confédération suisse
Confederazione Svizzera
Confederaziun svizra

Federal Department of Foreign Affairs FDFA
Swiss Agency for Development and Cooperation SDC

Շվեյցարիայի զարգացման եւ համագործակցության գործակալության կողմից Հայաստանում անցկացվող «Արձագանք» ծրագրի հիմնական նախագահը Հայաստանում աղակերտ-րոնացված փրկարարական համակարգի հզորացումն է: Ծրագրի առաջին փուլում 2004-2005 թթ. Լոռիի եւ Սյունիքի մարզերի 12 հրեջ մասերում կազմակերպվել են հրահանգիչների դասընթացներ, որից հետո հրեջ կայաններն առաջնությունը կազմակերպել են անհրաժեշտ փրկարարական գործիքներով ու սարքավորումներով: Սահմանված գերազանց արդյունքներ ունենալով է կայացվել օտարերկրյա ծրագիրը եւ այնտեղ ընդգրկել Հայաստանի բոլոր հրեջ մասերը:

Մխրճվել էր ծառերի մեջ

2008 թ. օգոստոսի 4-ին, երեկոյան ժամը 23-ի սահմաններում ստացանք ահազանգ, որ Սեւան-երեւան մայրուղում՝ Հրազդանի տարածքում տեղի է ունեցել ավտովթար՝ հրդեհի բռնկումով, եւ կան վիրավորներ ու զոհեր:



Դեպքի վայր դուրս եկավ մեկ մարդ ու մեկ օդակ: Հասնելով դեպքի վայր՝ նկատեցինք, որ մոտ 30 ավտոմեքենա շարվել էր մայրուղում, մարդիկ փորձում էին ինչ-որ բանով օգտակար լինել տուժածներին: «Մեր սեղետ» մակնիշի ավտոմեքենան մխրճվել էր ծառերի մեջ: Հարվածն ուժեղ էր եղել, մեքենայում երեք զոհ կար, բայց վարորդը կենդանի էր, վիրավոր եւ «օգնություն» երկանջում: Մենք սկսեցինք մեր փրկարարական աշխատանքները: Հանցեցինք զոհերին ավտոմեքենայից, իսկ վարորդին հնարավոր չէր միանգամից դուրս բերել, քանի որ նրա ոտքը եւ ձեռքը ճգնված էին: Մենք ավտոմեքենան կապեցինք մեր Ձիւ-130-ից ու հանցեցինք մայրուղի, որից հետո տուժածին դուրս բերեցինք ավտոմեքենայից եւ շտապօգնության մեքենայով ուղարկեցինք Հրազդանի հիվանդանոց: Այնտեղ տարան նաեւ զոհերին. նրանց հարազատների լացն ու աղաղակը չեն մոռանում:

Արմեն Բաղդասարյան, Կոտայքի ՄՓՎ Հրազդանի շտաբի 4-րդ հ/պ ավագ լեյտենանտ

Հնարամիտ փարսիկը

2009 թ. ապրիլի ամիսն էր: Հարթափոխը հանձնել էի եւ ուզում էի մեքենան հեռանալ հյուր գնալ իմ հարազատներից մեկին: Սակայն ինձ զանգահարեցին մեր շտաբից: Ջոկատում ահազանգ էին ստացել:



Ինչ արած, գործը մնում է գործ, շտապ ներկայացնում: Պարզվեց, որ մի խումբ կանայք Կոտայքի մարզից եկել էին մեր գյուղի դաշտերից բացառապես փրկարարական աշխատանքները: Սակայն ամենադժվար խնդիրն այն էր, որ տատիկը ոչ լավ լսում էր, ոչ էլ տեսնում: Դե արի ու տատիկ գտի: Այս հանգամանքը հաշվի առնելով՝ փրկարարական աշխատանքներին ներգրավվեցին նաեւ Ապարանի շտաբի մեծ թվով փրկարարները: Աշխատանքները շարունակվեցին մինչեւ ուշ գիշեր, իսկ տատիկը չկար ու չկար: Հենց այդ պահին հնչեց մի զանգ ԵՊ-ից. պարզվում է, որ մեր «հերոս» տատիկը, ծանապարհը կորցնելուց ու ընկերներից բաժանվելուց հետո, դուրս է գալիս

կենտրոնական ճանապարհ, տաք սի է կանգնեցնում եւ... ուղիղ իր տուն. իսկ փնտրողները թող հա փնտրեն: Ինչ խոսք, հնարամիտ տատիկ էր, ու մենք էլ չգիտեինք՝ ուրախանա՞նք, թե՞ բարկանանք...

Նարեկ Պողոսյան, Արագածոտնի ՄՓՎ Արագածի շտաբի հ/պ, փ/ծ ավագ սերժանտ

Նոր տարվա անակնկալը

Հիշում եմ՝ 2005թ. դեկտեմբերի 31-ն էր, երբ հերթական անգամ մեկնեցի աշխատանքի: Լավ օր էր, աշխույժ, մարդաշատ, առատ ձյուն: Այդ ժամանակ ես աշխատում էի Արմավիրի հրեջ մասում: Սովորական համաձայն, քանի որ Նոր տարի էր, օրն սկսել էիք բարձր տրամադրությամբ: Ի դեպ, չմոռանա՞նք, որ այդ օրը նաեւ գործընկերոջս ծննդյան օրն է: Հերթափոխն ընդունելուց հետո ընկերներով որոշում էինք, թե ինչպես եւ ինչ մակարդակով դիմավորենք 2006 թիվը եւ նշենք մեր ընկերոջ 25-ամյակը, մի պահ մոռանալով, որ աշխատում էինք հրեջ մասում, եւ որ այդ օրը, հատկապես, լեցուն էր լիճակով անակնկալներով: Մինչեւ երեկոյան 20:30-ը օրը բարի էր: Ու հանկարծ ստացվեց, որ մեկնելու հրամանը: Տուն էր այրվում Արմավիրի մարզի Արմավիր գյուղում: Մեկնեցինք դեպքի վայր, տունը փայտյա տնակ էր, ներսից ուներ նկուղ, կրակը սկսվել էր նկուղից: Անդրադարձնելով աշխատանքին՝ թրջվում ու սառչում. զարմանալից այն էր, որ հրդեհը հանգցնելուց 5 րոպե հետո նորից հրդեհ էր բռնկվում, նկուղում ջրերը սառած էին, ջուրը քչություն էր անում, չնայած որ երկու մարտական մեքենայով էինք: Ու քանի որ տունը փայտից էր, քիչ բան կարողացանք փրկել: Ցավ էր ինձ համար, որ նոր տարվա շեմին մի ընտանիք՝ հայրը, մայրը եւ իրենց երկու երեխաները, մնացին անօթեւան: Վերադարձանք շատ ուշ եւ շատ հոգնած, առանց բարի լուրի, եւ տրամադրություն էլ չկար ո՛չ ծնունդի, ո՛չ էլ Նոր տարվա: Կոչ եմ անում բոլորին՝ զգույշ եւ ուշադիր եղեք:



Արմավիրի մարզի Արմավիր գյուղում: Մեկնեցինք դեպքի վայր, տունը փայտյա տնակ էր, ներսից ուներ նկուղ, կրակը սկսվել էր նկուղից: Անդրադարձնելով աշխատանքին՝ թրջվում ու սառչում. զարմանալից այն էր, որ հրդեհը հանգցնելուց 5 րոպե հետո նորից հրդեհ էր բռնկվում, նկուղում ջրերը սառած էին, ջուրը քչություն էր անում, չնայած որ երկու մարտական մեքենայով էինք: Ու քանի որ տունը փայտից էր, քիչ բան կարողացանք փրկել: Ցավ էր ինձ համար, որ նոր տարվա շեմին մի ընտանիք՝ հայրը, մայրը եւ իրենց երկու երեխաները, մնացին անօթեւան: Վերադարձանք շատ ուշ եւ շատ հոգնած, առանց բարի լուրի, եւ տրամադրություն էլ չկար ո՛չ ծնունդի, ո՛չ էլ Նոր տարվա: Կոչ եմ անում բոլորին՝ զգույշ եւ ուշադիր եղեք:

Վահե Սարգսյան, Արմավիրի ՄՓՎ Բաղրամյանի շտաբի հրեջ՝ ավագ սերժանտ

Էջմիածնի բնակելի շենքերից մեկում

Դեպքը տեղի է ունեցել 2009 թ. դեկտեմբերի 3-ին: Ծառայության ժամանակ, ժամը 18:45-ին ահազանգ ստացանք, որ Էջմիածնի բնակելի շենքերից մեկում բնակարանի դուռ էր փակվել, եւ մայր ու աղջիկ մնացել էին տանը փակված: Մեր պահակապետ Գառնիկ Փորթյանի ղեկավարում էր փակվել, եւ մայր ու աղջիկ մնացել էին տանը փակված: Մեր պահակապետ Գառնիկ Փորթյանի ղեկավարում էր փակվել, եւ մայր ու աղջիկ մնացել էին տանը փակված:

Հենրիկ Ավոյան, Արմավիրի ՄՓՎ Բաղրամյանի շտաբի հրեջ, սերժանտ

Առաջին կանչը

Սկսեմ նրանից, որ ես ամենեին էլ չէի ուզում աշխատել հրեջ մասում: Սակայն ընտանիքի մթերությունը եւ սոցիալական վիճակը այնպիսին էին, որ ինձ աշխատանք էր անհրաժեշտ, եւ մեր համայնքում ամենահարմար աշխատատեղերից մեկը հրեջ ծառայությունն էր: Եւ ես ինձ հանձնելով (դա միայն սկզբում էր)՝ ընդունվեցի ծառայության եւ միանգամից նշեմ, որ ամենեւին էլ չեմ փոշմանել,

ավելին՝ հպարտ եմ: Կոլեկտիվի հետ շուտ մերվեցի: Հերթափոխում շատ արագ ինձ սովորեցրին մեր գործի, ծառայության հմտությունները եւ կարեւորությունը: Եւ ահա, հետզհետե սովորելով եւ աշխատելով հրեջ մասում՝ ես սկսեցի ավելի ու ավելի սիրել մեր ծառայությունը, աշխատանքային ընկերներին, եւ ինձ մեջ արդեն հետաքրքրություն էր առաջացել, թե՞ երբ կլինի մի իսկական հրդեհ կամ այլ դեպք, եւ ես ինչպե՞ս կպահեմ ինձ դեպքի վայրում:

Սովորական երեկո էր, հրեջ մասում հեռուստացույցով ֆուտբոլ էինք դիտում, եւ հանկարծ հնչեց ահազանգ. հրդեհ էր: Առաջին պահին տագնապ ապրեցի, կարծես իրարանցում ու քաոս էր իմ մեջ: Հասնելով դեպքի վայր, նկատեցինք, որ այրվում էր խոտի դեզ, փոքր չափերի, եւ առանձնապես դժվար չէր հանգցնել այդ հրդեհը: Սակայն ամենակարեւորը, ինչ ես նկատեցի, դա մեր հին, փորձառու աշխատողների հոգատարությունն էր իմ նկատմամբ: Հրդեհաշիջման աշխատանքների ժամանակ եկավ նաեւ մեր հրեջ մասի պետը, եւ ես ավելի ոգեւորվեցի ու պարտավորվեցի նրա ներկայությունից: Շատ կարճ ժամանակում մենք վերջացրեցինք հրդեհաշիջման աշխատանքները եւ վերադարձանք հրեջ մաս: Այնտեղ մեր կոլեկտիվը, ինչպես ընդունված է, «շնորհավորեց» ինձ առաջին կանչի առիթով: Այսպես եղավ իմ առաջին կանչի դուրս գալը: Եւ ես հասկացա, որ մեր կոլեկտիվում բոլորն ինձ հետ են, ու ես՝ բոլորի:

Վահե Սարգսյան, Արմավիրի ՄՓՎ Բաղրամյանի շտաբի հրեջ՝ ավագ սերժանտ

Էջմիածնի բնակելի շենքերից մեկում

Դեպքը տեղի է ունեցել 2009 թ. դեկտեմբերի 3-ին: Ծառայության ժամանակ, ժամը 18:45-ին ահազանգ ստացանք, որ Էջմիածնի բնակելի շենքերից մեկում բնակարանի դուռ էր փակվել, եւ մայր ու աղջիկ մնացել էին տանը փակված: Մեր պահակապետ Գառնիկ Փորթյանի ղեկավարում էր փակվել, եւ մայր ու աղջիկ մնացել էին տանը փակված:

Մեր պահակապետ Գառնիկ Փորթյանի ղեկավարում էր փակվել, եւ մայր ու աղջիկ մնացել էին տանը փակված:

Մեր պահակապետ Գառնիկ Փորթյանի ղեկավարում էր փակվել, եւ մայր ու աղջիկ մնացել էին տանը փակված:

Մեր պահակապետ Գառնիկ Փորթյանի ղեկավարում էր փակվել, եւ մայր ու աղջիկ մնացել էին տանը փակված: Մեր պահակապետ Գառնիկ Փորթյանի ղեկավարում էր փակվել, եւ մայր ու աղջիկ մնացել էին տանը փակված:

իջեց երրորդ հարկի շքամուտք: Դժվար գործողություն էր, բայց մեր աշխատանքային փորձն օգնեց: Մարտիրոսը կապեց ինձ պարանոյ, եւ պահակապետ Գառնիկի հետ միասին ինձ զգուշությամբ իջեցրին տիկին Նարինեի բնակարանի շքամուտքին: Ես արագ արձակվելով պարանոյ՝ շտապեցի իմ օգնությունը ցույց տալու: Դուռը բացելուց հետո նրանք իրենց երախտիքը հայտնեցին, իսկ հարեւանները ծափահարեցին մեզ՝ մեր անթերի աշխատանքի համար: Այդ փորձությունը հարթահարելուց հետո մենք ձեռք բերեցինք մեծ հարգանք: Առաջադրանքը կատարելուց հետո մենք վերադարձանք ստորաբաժանում:

Հրայր Դանիելյան, Արմավիրի ՄՓՎ Վաղարշապատի շտաբի կրտսեր սերժանտ

Վառելիքով լցված հացատունը

Ուզում եմ պատմել մի տխուր դեպքի մասին: 1998-ի դեկտեմբերի 28-ն էր՝ ծնունդի մի ցուրտ օր: Լուսաբացին, ժամը 6:15-ի սահմաններում Ապարանի շտաբի հրեջ մասում ստացանք պատմություն մի բնակչի կողմից: Նա հայտնում էր, որ այրվում է իր հարեւանի հացատունը: Ամսօրյապես դեպքի վայր մեկնեցինք մեկ մարտական հաշվարկով: Տեղ հասանք, ու պարզվեց, որ հրդեհը հացատնից արագորեն գոմի տանիքով տարածվում է դեպի տուն: Կից կառույցներ էին, վտանգավոր էր, որովհետեւ տան ծածկն էլ փայտյա էր: Հետախուզումը մի քանի րոպեից, որ ծխախոտը եւ եղել 3 զուլխ խոշոր եղջերավոր անասուն եւ մի քանի հավ: Մեր կողմից արագ մեկուսացվեց հրդեհը, իսկ հրդեհի մարման աշխատանքները տեւեցին մինչեւ ժամը 12-ը: Պատճառն այն էր, որ ամբողջ հացատունը լցված էր վառելիքով՝ «աթարով»: Հրդեհաշիջման աշխատանքներից հետո բոլորս մի տեսակ ճնշված էինք ու տխուր, որովհետեւ մարդը՝ Նոր տարվա շեմին գրկվել էր իր ապրուստի միջոցներից, բայց, զգալով տանտիրոջ ջերմ վերաբերմունքը մեր հանդեպ, հասկացանք, որ ամեն ինչ կարող էր ավելի վատ վերջանալ, ավելի ծանր հետեւանքներ ունենալ, եթե չլինեք մեր արագ արձագանքը:

Իսկ առհասարակ վնասի չափերն ավելի փոքր կլինեք, եթե մեր քաղաքացիները պահպանեն հակահրդեհային անվտանգության տարրական կանոնները: Ուստի պետք է մեծացնել բնակչության շրջանում տարվող քաղաքացիական աշխատանքի ծավալները՝ բոլոր տեսակների աղետներին դիմագրավելու համար:

Արշակ Սարգսյան, Արագածոտնի ՄՓՎ Ապարանի շտաբի հրեջ՝ հեռախոսավար



Ինչպես հասկանալ դեռահասին

Նա «հեռանում» է ծնողներից

Դեռահասն ուզում է, որ իրեն ընկալեն որպես հասուն մարդ, իսկ ծնողները շարունակում են նրան վերաբերվել որպես փոքր երեխայի, ինչը շատ է նյարդայնացնում դեռահասին՝ հիմք ստեղծելով ոչ ցանկալի հարաբերությունների համար: Ծնողներից շատերը դեռևս չեն կարողացնում պատկերացնել, որ իրենց զավակն այլևս փոքր չէ, որ նա մեծանում է, ձեռք է բերում նոր որակներ եւ հատկություններ, որոնք փոքրիկ երեխային այլևս բնորոշ չեն: Ծնողը շարունակում է երեխային վերաբերվել որպես անօգնական մի եակի, շարունակում է նրան խնամել, հետ պահել անբացատրելի վտանգներից, իսկ ծնողի գերխնամքը դուր չի գալիս դեռահասին, քանի որ նա իրեն արդեն մեծ է համարում:

Չայրն ու մայրը դեռահասին հիշեցնում են մանկությունը, որից նա ուզում է ազատվել: Նրան անհրաժեշտ է ժամանակ, որ նա հեռանա ծնողներից եւ, միայն որոշակի հեռավորություն ստեղծելուց հետո, նորից կսկսի շփվել նրանց հետ: Իսկ մինչ այդ նա գերադասում է վատախել իր հասակակիցներին, քանի որ նրանք էլ նույն խնդիրներն ունեն, ինչ-որ ինքը:

Երբ ծնողը փորձում է մտերմանալ իր երեխայի հետ, դա մեծացնում է դեռահասի տագնապը, քանի որ նա վախենում է բացահայտվել ծնողների կողմից: Ծնողին մի շարք հարցեր են անհանգստացնում՝ «Ի՞նչ են նրանք սպասում մեզանից», «Ուզում են, որ մենք իրենց հանգիստ թողնենք եւ օրինակներ չբերենք մեր կյանքից», «Թե՞ իրականում սպասում են, որ մենք հարցեր կտանք, կհետաքրքրվենք իրենց կյանքով, կվերահսկենք իրենց կյանքը»:

Որքան էլ պարագրքսալ հնչի՝ դեռահասը ծնողից սպասում է այս բոլորը: Բայց ինչպե՞ս

Մ Դեռահասության տարիքի առանձնահատկությունն այն է, որ մարդը մտնում է այս փուլ որպես երեխա եւ դուրս է գալիս արդեն չափահաս դարձած: Այս փուլն ընդգրկում է 11-17 տարիները, որոնք ընթանում են ակնհայտ ֆիզիոլոգիական եւ հոգեբանական փոփոխություններով: Դեռահասն ունենում է մի շարք դժվարություններ, որոնք էլ փոխանցվում են ծնողներին: Շատ հաճախ ծնողները չգիտեն, թե ինչպես իրենց պահեն կամ ինչպես օգնեն իրենց երեխային կյանքի այդ բարդ շրջանում եւ հաճախ, օգնելու փոխարեն, ավելի են ծանրացնում իրավիճակը: Փորձենք վերլուծել ու հասկանալ ե՛լ դեռահասին, ե՛լ ծնողներին՝ կյանքի այս փուլում:

Ծնողն աջակցի իր երեխային եւ միեւնույն ժամանակ չսահմանափակի նրա ազատությունը, որն անհրաժեշտ է սեփական անձը հասկանալու համար: Այս հարցերը չունեն պատրաստի պատասխաններ: Սակայն կա մի կարելուր հանգամանք, որը պետք է ծնողները գիտակցեն. երեխան առանձին անհատականություն է, եւ ծնողից առանձնանալը նպատակ է նրա հատկանշալու: Եղբք միշտ բաց՝ ցանկացած թեմա քննարկելու համար: Երբ երեխան իր հարցերի պատասխանները չի ստանում ծնողներից, ապա փորձելու է դրանք դրսում գտնել: Անկեղծ եղբք երեխայի հետ, մի փորձք նրան ճնշել նույն հարցերով, միեւնույն է, նա դրանց չի պատասխանի, եթե չի ուզում: Երեխայի մեջ կատաղություն առաջացրեք ձեր նկատմամբ: Նման մոտեցումը կօգնի, որ դուք մտերմանաք:

Անում են ամեն ինչ, որ իրենց չհասկանան

Ծնողներն անընդհատ մտածում են, թե ուր կորավ այն երեխան, որին իրենք մեծացրել են՝ նա անձանաչելի է դարձել եւ իրեն այնքան տարօրինակ է պահում: Նրանք փորձում են այդ հարցերի պատասխան ստանալ՝ հարցերով ճնշելով երեխային: Դեռահասը չի կարողանում համապատասխան բառեր ընտրել իր հույզերն արտահայտելու համար, այդ իսկ պատճառով նա դիտմամբ

աղձատում է իր խոսքը, նրանք հնարում են ինչ-որ նոր լեզու, որը հասկանում են միայն իրենք: Այս տարիքը հուզականորեն անկայուն տարիք է, դեռահասի տրամադրությունը կարող է փոխվել օրվա ընթացքում մի քանի անգամ: Նրանք դառնում են դյուրագրգիռ, խոցելի: Յուրաքանչյուր քննադատություն ընդունում են որպես նա մեկ ապացույց, որ իրենց ոչ ոք չի սիրում եւ չի հասկանում: Դեռահասները սեփական «ես»-ի փնտրություններն են, փորձում են իրենց ամեն ինչում, փորձում են հասկանալ, թե ով են իրենք: Դեռահասը կարիք ունի, որ իրեն լսեն, այլ ոչ թե մանրադիտակով ուսումնասիրեն, հետեւեն ու քննադատեն իրենց յուրաքանչյուր քայլը, որը շատ ծնողների՝ հաճախ հանդիպող սխալներից է:

Կան մի քանի ընդհանուր խորհուրդներ, որոնք կօգնեն ծնողներին կողմնորոշվել եւ հասկանալ, թե ինչ է կատարվում իրենց դեռահաս զավակի հետ:

1. Անցումային շրջանը հիվանդություն չէ, եթե նույնիսկ այն տանջանք է պատճառում եւ երեխային, եւ ծնողին: Պարզապես երեխայի կյանքում ամեն ինչ փոխվում է:

2. Դեռահասության տարիքը կարելի է համեմատել կառուցվող շենքի հետ, որտեղ առաջին հերթին պետք է ամեն ինչ մաքրել, հետո նորը կառուցել: Չիշեք՝ անսպասելի դժվարություններն անխուսափելի են:

3. Դեռահասը կառուցում է իր հոգեկան աշխարհը, փորձում է պարզել իր իրական

«ես»-ը, սկսում է իրեն զգալ իսկական աղջիկ, կամ տղա, քանի որ տեղի են ունենում ֆիզիոլոգիական մեծ փոփոխություններ: Նա սկսում է գիտակցել, որ գոյություն ունի, մտածում է, ինքնուրույն որոշումներ է ընդունում, ապագայի պլաններ է գծում: Սկսում է մտածել մարդկանց հետ իր հարաբերությունների, սոցիալական նորմերի եւ կանոնների մասին:

4. Դեռահասությանը բնորոշ զգացողություններն են. անվստահություն սեփական անձի նկատմամբ, կասկածամտություն եւ մեծ կյանք մտնելու վախ, առաջանում է կանոններին չենթարկվելու ցանկություն, չեն կարողանում ընկերներ գտնել կամ էլ այն աստիճանի են ձուլվում ընկերական խմբին, որ կորցնում են իրենց անհատականությունը:

5. Ե՞րբ պետք է ծնողները լրջորեն անհանգստանան. երբ խնդիրներն իսկապես լուրջ են, իսկ լուծումները շատ են ձգձգվում: Երբ երեխան շատ է ներփակվում իր մեջ, երբ նա չունի ոչ մի ընկեր, երբ նա լիովին թողել է ուսումը կամ չի ուզում կյանքում որեւէ բան անել, նա պլաններ չի գծում կամ խախտում է օրենքները:

6. Ցանկալի է նման դեպքերում խորհրդակցել հոգեբանի հետ. պատմեք ձեր մտահոգությունների մասին մասնագետին, անհրաժեշտության դեպքում այցելեք երեխայի հետ, իսկ եթե նա հրաժարվում է, ապա դուք ինքներդ գնացեք խորհրդակցության, որն անպայման ձեզ կօգնի ճիշտ հասկանալ եւ օգնել ձեր երեխային:

ԱՆՆԱ Կարապետյան
հոգեբան-խորհրդատու

Ձեր հարցերը հոգեբանին կարող եք ուղարկել hogeban@emergency.am էլ. հասցեով:

Աշխարհի վերջը հեղաձգվում է

Վերջերս մոլորակի բնակիչները վախենալու նոր առիթ են գտել: Վերջին «աշխարհի վերջից» 10 տարի հետո կրկին խոսում են նոր «արմազեղորնի» մասին: Խոսում են, քննարկում, քաջուն կամ բացահայտ վախենում, գիշերները չեն քնում, իսկ ամերիկացիներն իրենց սովորություն համաձայն ֆիլմեր են նկարահանում: Այս անգամ աշխարհի վերջի համար նոր ամսաթիվ է կանխատեսված՝ 2012 թվականի դեկտեմբերի 21-ից 23-ը ընկած ժամանակահատվածը: Ոմանք ասում են՝ աշխարհը հենց մեկ օրում, ի՞նչ մեկ օր, մեկ վայրկյանում կվերանա, մյուսները էլ, թե՛ չէ, այդ օրը կսկսվի, ու կամաց-կամաց մեր վերջը կգա: Ու ասողներն էլ, դարձյալ՝ իրենց ասելով, հիմք-ապացույցներ ունեն ու պնդում են, որ այս անգամ մեր բանն իսկապես բուրդ է:

Ամենատարածված ապացույցներից մեկն այն է, որ հնագույն մայա ցեղին պատկանող հնդկացիները, ովքեր տիեզերքի մասին փայլուն գիտելիքներ են ունեցել ու ֆանտաստիկ ճշգրիտ օրացույց են ստեղծել, հենց այդ օրացույցը վերջացրել են 2012 թվականի դեկտեմբերի 21-ով: Բայց հայ գիտնականները կարծում են, որ դա աշխարհի վերջը չի գուժում. այդ օրացույցը մի օր պիտի վերջանա՞ր, թե՛ չէ:

- Տարբեր կրոններում տարբեր ամսաթիվեր են, մեզ մոտ մի թիվ է, իսկ, օրինակ, մահմեդականների մոտ՝ այլ: Մայաներն այլ թվական են ունեցել: Հայերի հին տոմարով այլ թվական է: Մի խոսքով՝ կարծում են այդ ամենը մի կայսրայի մեջ խառնելն ու դրանից սենսացիա եփելը ուսարություն գրավելու համար է: Բայց դրա թիվ ոչ մի գիտնական հիմք չկա, - ասում է Բյուրականի աստղադիտարանի տնօրեն Հայկ Հարությունյանը:

Միստիկայի սիրահարները դեկտեմբերի

21-ով ավարտված մայաների օրացույցի հետ են համադրում նաեւ այն փաստը, որ այդ օրը մոլորակների շքերթ է լինելու: Իսկ միստիկայով չտարվող գիտնականները դրան պատասխանում են, որ՝ էհ, ի՞նչ անենք, մոլորակների շքերթներ բավական հաճախ են լինում:

- Այսօր մենք գիտենք, որ գրեթե բոլոր աստղերի շուրջը մոլորակներ կան, մոտ 300 մոլորակ է հայտնաբերվել, բայց խոսել դրանց ցեղերի մասին ուղղակի անհնար է, - ասում է աստղագիտ Գրիգորի Հայկ Հարությունյանը. - Ես չգիտեմ՝ այդ ո՞վ այդքան ինֆորմացիա ունի, որ կարող է նման բան ասել: Աստղերի մեծ մասի շուրջը մենք գիտենք մեկ մոլորակ, երկու մոլորակ, ի՞նչ ցեղերի մասին է խոսել: Միայն արեւի շուրջն է, որ գիտենք՝ 9 մոլորակ կա, այսինքն՝ արեւն 8, որովհետեւ Պլուտոնը դուրս եկավ ցուցակից:

Ամենաշրջանառվող վարկածն այն է, որ դեռ շուրջերի թողած տեքստերի համաձայն գոյություն ունի Նիբիրո մոլորակ, որը գալիս է ուղիղ երկրի վրա: Ինտերնետը ողողված է դրա նկարներով ու մեկնաբանություններով: Նույնիսկ ինֆորմացիա կա, թե ամերիկացի գիտնականներն արդեն սկսել են դիտել Նիբիրոն: Սակայն հայ գիտնա-

կաններն ասում են, որ 10-րդ մոլորակի գոյության մասին վարկած կա, բայց այն դեռևս երկրացիների տեսադաշտից դուրս է:

- Իրականում ոչ մի լուրջ գիտնական հաղորդում գոյություն չունի այդ մոլորակի գիտնական մասին, - հավաստում է Բյուրականի աստղադիտարանի տնօրեն Հայկ Հարությունյանը: - Դա, այսպես ասած, սղառվող աղբն է, որով ինչ-որ մարդիկ օգտագործում են կամ հեղինակություն կամ դրան կամ ինչ-որ այլ բան վասակելու համար:

Մեկ այլ վարկածի համաձայն՝ աշխարհի կործանման մեղավորն արեւն է լինելու, որն այնքան է ակտիվանալու, որ վերացնելու է մոլորակի վրա եղած ամեն ինչ: Բայց Բյուրականի աստղադիտարանի տնօրեն, աստղագիտ Գրիգորի Հայկ Հարությունյանն այդ տարբերակն էլ է բացառում: Արեւն այն աստղերից չէ, որոնք մի քանի վայրկյանում կարող են հարյուրապատկել իրենց ճառագայթումը: Արեգակի յուրահատուկ ակտիվություն լինում է 11 տարին մեկ, ու 2012-ը հենց հաջորդ ակտիվության շրջանն է: Սակայն նույնիսկ ամենակտիվ ժամանակ այն չի կարող սպառնալ բնաջնջել մարդկային քաղաքակրթությունը:

- Մարդկության համար այսօր ամենավտանգավորը հենց ինքն մարդն է՝ բնության նկատմամբ ունեցած իր վերաբերմունքով, - հանդգնում է աստղագիտը:

Քրիստոնյան աշխարհի վերջերին չափտի հավատա ու վախենա, սա է հայ առաքելական եկեղեցու դիրքորոշումը: Ըստ քրիստոնական հավատի, ոչ թե աշխարհի վերջ է լինում, այլ՝ աշխարհի կատարելագործում, որն էլ պայմանավորված է լինելու Հիսուսի 2-րդ գալուստով, երբ երկրի վրայից ոչ թե ողջ մարդկությունն է բնաջնջվելու, այլ՝ միայն չարիքը:

- Ասվածածանցի մեջ նշված չէ, թե Հիսուսի երկրորդ գալուստը երբ է լինելու, նա նույնիսկ ասում է, որ ինքն էլ չգիտի, - ասում է Տեր Տաճատ ավագ քահանա Դավիդյանը, - մենք կրթաստիքներն ունենք, ովքեր զուգակրթություններ են անում, կարծես նրանք ուզում են հուշեն Աստուծան, իրաջան, թե երբ լինի աշխարհի վերջը: Վերջերս աս են լինում արեւներ, երկրաշարժեր, մարդիկ ասում են՝ ահա աշխարհի վերջն է, բայց Հիսուսն ասում է՝ դրանք աշխարհի վերջը չեն, այլ սկիզբն են երկունքի:

Իսկ աշխարհը սեփական ձեռքերով կործանման չտանելու ու չարիքը չչատացնելու համար մարդկանց ուղղակի խորհուրդ է տրվում ապրել Աստվածաշնչի պատվիրաններից ամենազխալիրով՝ սիրով: - Երկու բան են կարելու բոլոր մասվիրաններից, առաջինը՝ սիրել Աստուծան ամբողջ հոգով ու նամմով, եւ երկրորդ՝ սիրել եղբորդ, քրոջդ, հարեանիդ եւ այլն, այսինքն՝ մեծավորիդ: Իսկ մնացածը՝ եկեղեցի գնալ, մոմ վառել, ծոմ դառնել, իհարկե, կարելու են, բայց զվխավորն այս երկունքն են, - ասում է Տեր Տաճատ ավագ քահանա Դավիդյանը:

Եկեղեցին հորդորում է Աստուծո գործերին չխառնվել, իսկ գիտնականներն առաջարկում են 2012 թվականի դեկտեմբերի 21-ին դուրս գալ տնից, նայել երկնքին եւ միասին ուրախանալ, որ այս անգամ էլ աշխարհի վերջը չեկա:

ԱՆԻ Ստեփանյան

Արա Գեւորգյանը արտակարգ իրավիճակներում

Երբ որեւէ արտակարգ դեպք կամ պատահար է տեղի ունենում, չի հարցնում ոչ դեմք ու դիրք, ոչ տարիք կամ էլ կուսակցություն: Յուրաքանչյուրս էլ մեր կյանքի տարբեր փուլերում առնչվել ենք առօրյայից շեղվող ամենատարբեր պատահարների հետ, օգնության ենք հասել, մեզ են օգնության ձեռք մեկնել, մեկն իրեն շատ ճիշտ է պահել, մի ուրիշը վախեցել է, մեկը խուճապի է մատնվել, մյուսը՝ «վայ մամա քան» գոռալով փախել...



կարգ իրավիճակներ հաղթահարում: Դավիթ Գեւորգյան
- Կարող եմ ասել, որ իմ արողը կյանքն ամբողջովին արտակարգ իրավիճակ է: Փոքր ժամանակ, երբ դեռ լողալ չգիտեի, ինձ օտս հաճախ հրում, գոցում էին լողակազանը: Ինձ փրկում էին մոտակա բարի մարդիկ, քսուողները: Մի անգամ էլ ամռանը ջրոցի էինք խաղում, թաղամասի բոլոր փոսերը բաց էին, որ-դեղից արտակարգ ջուր վերցնեմ: Ինձ ոտ-ը սայթափեց, եւ ես ընկա փոսը: Ինձ օգնեց դուրս գալ ֆուլբիկիս ընկերուհի Մանեն: Ես նրանից օտս շնորհակալ եմ...

բազմաթիվ արտակարգ իրավիճակներ եղել: Օրինակ, վերելակային «գերու-թյան» դեպքեր շատ են պատահել, բայց մի դեպքում նրան հաջողվել է սովորել դարձի տնային հանձնարարու-թյունները:

- Դորոցից գնացի *sashlyku* սեսալ-ցելու: Տուն վերադառնալիս մնացի վե-րելակի մեջ: Չայն սվեցի՝ մարդ չկար, որ օգնեք դուրս գալ: Ես որոշեցի դա-րադ կանգնելու փոխարեն դասերս սո-վորել, եւ մութ վերելակում կանգնած, դռների ճեղքից ընկնող լույսի սակ կա-սարեցի դորոցական հանձնարարու-թյունները:

Բազմաթիվ են այն արտակարգ դեպքերը, որին ակամատես է եղել Արա Գեւորգյանը: Պատահել է, որ նույնիսկ մարդու կյանք է փրկել:

- Սոչիում հանգստանում էին: Համ-կարծ չախ ընկավ ափին «դառնած» մի տղամարդ: Հարցրեցի ինչ է դասառել, ասացին՝ խեղդված է:

Հետաքրքրությունից նա մոտենում է «խեղդվածին», բռնում որովայնի տա-կից ու սկսում թափահարել:

- Այնքան թափահարեցի, որ ուժա-դառ եղա, - ասում է Արան, - հետո ես սկսեցի օգնություն կանչել: Մոտեցան երկու կին ու սկսեցին նրան արհեսա-կան շնչառություն տալ: Կես ժամ անց այդ տղամարդը սրբիչով փաթաթված մտած էր ծովափին ու թեյ էր խմում:

Մեկ այլ դեպք էլ պատահել է Երեւա-

նի Շենգավիթ համայնքում: Ավտոմո-բիլի էին ենթարկվել մի կին ու տղամարդ: Շուրջը հավաքված մարդիկ, ոստիկան-ները սպասում էին Շտապօգնությանը: Սակայն վերջինս ուշանում էր: Արան մի քանի րոպե սպասում է, հետո երթու-ղային տաքսի կազմեցնում, մարդկանց խնդրում իջնել մեքենայից:

- Հետո նրանց զգուշությամբ տեղա-փոխեցին մեքենայի մեջ ու օտար հասցրեցին հիվանդանոց: Տղային առաջին օգնություն ցուցաբերելուց հե-տո, բժիշկները տեղակայեցին, որ եթե մի քանի վայրկյան նրանց ուժ հասցնեին հիվանդանոց, տղան կմահանար... Փաստեմ կարող եմ ասել, որ իմ օգնու-թյունը փրկեց տղայի կյանքը:

Իսկ Բեյրութում, երբ իրար են բախ-վում մոտ քսան մեքենա Արա Գեւորգ-յանը, սովորույթի համաձայն, փորձում է օգնության ձեռք մեկնել վթարված մե-քենաներից մեկի կին վարորդին: Այդ պահին նրան են մոտեցել տեղի բնա-կիչներն ու արգելել դիպչել կնոջը:

- Հետո ինձ բացատրեցին, որ, երկուսը գործող օրենքի համաձայն, միայն բժիշկն իրավունք ունի մոտենալ վթարի ենթարկվածին, որովհետեւ անտեղյակ մարդը կարող է ավելի վնասել տուժա-ծին: Բարեբախտաբար, այնտեղ Շտա-պօգնությունը եկավ ընդամենը երկու րոպե անց, եւ տուժածներին առաջին օգնություն ցույց տալուց հետո տեղա-փոխեցին հիվանդանոց:

Հայրարարություն

Հայաստանի Հանրապետու-թյան արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայությունը հայտա-րարում է մրցույթ՝ Հայաստանի փր-կարար ծառայության աշխատա-կազմում (այսուհետ՝ Աշխատա-կազմ) քաղաքացիական ծառայու-թյան հետեւյալ թափուր պաշտոն-ներն զբաղեցնելու համար

1. Ֆինանսատնտեսագիտա-կան վարչության հաշվապահա-կան հաշվառման եւ հաշվետվու-թյունների կազմման բաժնի (այ-սուհետ՝ Բաժնի) առաջին կարգի մասնագետ (ծածկագիր՝ 34/1-4.1-5)

Մասնակույն է քույրեղով նախա-տեսված ֆինանսավորման հայտերի վճարման փաստաթղթերի կազմման աշխատանքներին, իրականացնում է Բաժնի առջին դրված գործառնություն-րից եւ խնդիրներից բխող իրավական ակտերի, առաջարկությունների, եզ-րակացությունների եւ այլ փաս-տաթղթերի պահպանության եւ ար-խիվացման աշխատանքները, իրա-կանացնում է համակարգչային մուտ-քագրման աշխատանքները: Նախա-պատրաստում է իրավական ակտերի նախագծեր, առաջարկություններ, եզրակացություններ, այլ փաստաթղ-թեր, ինչպես նաեւ դրանց վերաբեր-թյալ մեթոդական պարզաբանումներ եւ ուղեցույցներ, մասնակցում է Բաժնի աշխատանքային ծրագրերի մշակման աշխատանքներին, իրա-կանացնում է սույն պաշտոնի անձ-նագրով սահմանված այլ լիազորու-թյուններ:

Մրցույթը կկայանա 09.04.2010 թ.՝ ժամը 10:00-ին, Հայաստանի փր-կարար ծառայության շենքում (ք. Երեւան, Պուշկինի 25):

Նշված թափուր պաշտոնն զբա-ղեցնելու համար պահանջվում է՝

- միջնակարգ կրթություն,
- տրամաբանելու, տարբեր իրա-վիճակներում կողմնորոշվելու ունա-կություն,

• անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում,

• այս կետում նշված պաշտոնի անձնագրերի 10-րդ կետի «բ» ենթա-կետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն,

• համակարգչի եւ ժամանակա-կից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն, ինչպես նաեւ այլ անհրաժեշտ ծրագրային միջոցների տիրապետում,

• անհրաժեշտ (պարտադիր) կա-ռավարչական հմտությունների եւ ու-նակությունների, ինչպես նաեւ նշված պաշտոնի անձնագրով նախատես-ված գործառնություններից բխող կառա-վարչական հմտությունների եւ ունա-կությունների տիրապետում (Ցանկեր N 1, 2):

2. Արարատի մարզային փրկա-րարական վարչության բնակչու-թյան պաշտպանության բաժնի (այսուհետ՝ Բաժնի) գլխավոր մաս-նագետ (ծածկագիր՝ 34/1-3.1-13)

Կազմակերպում է քաղաքացիա-կան պաշտպանության հիմնահարցե-րի ծրագրավորման, բնակչության պատասխանման, տարահանման, ան-հատական պաշտպանության միջոց-ներով ապահովման, քաղաքացիա-կան պաշտպանության ուժերի ստեղծման, կառավարման մարմին-ների պատրաստման, բնակչության ուսուցման եւ քաղաքացիական պաշտպանության ոլորտի այլ միջո-ցառումների պլանավորման եւ իրա-կանացման գործընթացները: Իր լիա-զորությունների շրջանակներում նա-խապատրաստում է առաջարկու-թյուններ, տեղեկանքներ, հաշվետ-վություններ, զեկուցագրեր եւ այլ գրություններ:

Նշված թափուր պաշտոնը զբա-ղեցնելու համար մրցույթը կկայա-նա 13.04.2010 թ. ժամը 10:00-ին, Հայաստանի փրկարար ծառայու-թյան շենքում (ք. Երեւան, Պուշկինի 25):

Նշված թափուր պաշտոնն զբա-ղեցնելու համար պահանջվում է՝

- բարձրագույն կրթություն,
- տրամաբանելու, տարբեր իրա-

վիճակներում կողմնորոշվելու ունա-կություն,

• անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում,

• նշված պաշտոնի անձնագրերի 10-րդ կետի «բ» ենթակետում նշված իրենց լիազորությունների հետ կապ-ված իրավական ակտերի անհրա-ժեշտ իմացություն,

• համակարգչի եւ ժամանակա-կից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն, ինչպես նաեւ այլ անհրաժեշտ ծրագրային միջոցների տիրապետում,

• անհրաժեշտ (պարտադիր) կա-ռավարչական հմտությունների եւ ու-նակությունների, ինչպես նաեւ նշված պաշտոնի անձնագրով նախատես-ված գործառնություններից բխող կառա-վարչական հմտությունների եւ ունա-կությունների տիրապետում (Ցանկեր N 1, 2):

3. Պետական հրդեհային տես-չության Արարատի մարզային հր-դեհային տեսչության տեսչական բաժնի (այսուհետ՝ Բաժնի) առա-ջատար մասնագետ-տեսուչ (ծած-կագիր՝ 34/1-3.3-11)

Վերահսկողություն է իրականաց-նում հրդեհների հետաքննության եւ վարչա-իրավական գործունեության գործառնությունների օրինակականության պահպանման նկատմամբ, իրակա-նացնում է հրդեհա-տեխնիկական հե-տազոտություններ, արդյունքներն ընդհանրացնում է եւ այն ներկայաց-նում Բաժնի պետ-ավագ տեսուչին՝ իր լիազորությունների շրջանակնե-րում, ինչպես նաեւ Բաժնի պետ-ա-վագ տեսուչի հանձնարարությամբ նախապատրաստում է առաջարկու-թյուններ, տեղեկանքներ, հաշվետ-վություններ, զեկուցագրեր եւ այլ գրություններ: Բաժնի պետ-ավագ տեսուչին՝ ըստ անհրաժեշտության, ներկայացնում է առաջարկություն-ներ:

Նշված թափուր պաշտոնն զբա-ղեցնելու համար մրցույթը կկայանա 15.04.2010 թ.՝ ժամը 10:00-ին, Հա-յաստանի փրկարար ծառայության շենքում (ք. Երեւան, Պուշկինի 25):

Նշված թափուր պաշտոնը զբա-

ղեցնելու համար պահանջվում է՝

- բարձրագույն կրթություն,
- քաղաքացիական ծառայության

պաշտոններում կամ համայնքային ծառայության պաշտոններում առ-վագն երկու տարվա ստաժ, կամ վեր-ջին երեք տարվա ընթացքում քաղա-քական, կամ հայեցողական, բացա-ռությամբ Հայաստանի Հանրապե-տության համայնքների ղեկավարնե-րի տեղակալաների, խորհրդական-ների, մամուլի քարտուղարների, օգ-նակամների եւ ռեֆերենտների պաշ-տոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տար-վա աշխատանքային ստաժ, կամ առնվազն երեք տարվա մասնագի-տական աշխատանքային ստաժ, կամ պետական կառավարման ոլոր-տի առնվազն մեկ տարվա աշխա-տանքային ստաժ:

• տրամաբանելու, տարբեր իրա-վիճակներում կողմնորոշվելու ունա-կություն,

• անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում,

• այս կետում նշված պաշտոնի անձնագրերի 10-րդ կետի «բ» ենթա-կետում նշված իրենց լիազորությու-ների հետ կապված իրավական ակ-տերի անհրաժեշտ իմացություն,

• համակարգչի եւ ժամանակա-կից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն, ինչպես նաեւ այլ անհրաժեշտ ծրագրային միջոցների տիրապետում,

• անհրաժեշտ (պարտադիր) կա-ռավարչական հմտությունների եւ ու-նակությունների, ինչպես նաեւ նշված պաշտոնների անձնագրով նախա-տեսված գործառնություններից բխող կա-ռավարչական հմտությունների եւ ու-նակությունների տիրապետում (Ցան-կեր N 1, 2):

Դիմող ՀՀ քաղաքացիները Աշ-խատակազմ (ք. Երեւան, Պուշկինի 25) պետք է ներկայացնեն հետեւյալ փաստաթղթերը՝

- դիմում մրցութային հանձնաժո-ղով անունով (ծեւ լրացվում է փաս-տաթղթերը ներկայացնելիս),

• տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիք-ների եւ աշխատանքային ունակու-թյունների տիրապետման տեսանկ-յունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաս-տաթղթերի՝ դիպլոմ(ներ)ի, վկայա-կի (վերջինիս պահանջային դեպ-քում անհրաժեշտ է ներկայացնել տե-ղեկանք համապատասխան մարմ-նից) պատճենները՝ բնօրինակների հետ միասին,

• արական սեռի անձինք՝ նաեւ զինվորական զբոսայգի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորա-կոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատաս-խան տեղեկանք,

• մեկ լուսանկար՝ 3X4 սմ չափսի,

• անձնագրի պատճենը:

ՀՀ քաղաքացին մրցութային մաս-նակցելու համար փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ ներկայացնե-լով անձնագիր:

ՀՀ քաղաքացիները մրցութային ներկայանում են անձնագրի, դիպլո-մի, աշխատանքային գրքույկի, իսկ արական սեռի անձինք՝ նաեւ զինվո-րական զբոսայգի կամ դրան փոխա-րինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի բնօրինակներով:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր՝ ժամը 9:30 - 12:30-ը, բացի շաբաթ եւ կիրակի օրերից:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 26.02.2010 թ.:

Մրցութային մասնակցել ցան-կացող ՀՀ քաղաքացիները լրացու-ցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաեւ պաշտոնի անձնագ-րերին եւ հարցաշարերին ծանոթա-նալու համար կարող են դիմել Աշխա-տակազմի անձնակազմի կառավար-ման վարչություն (ք. Երեւան, Պուշ-կինի 25, հեռ. 53-07-87):

Միաժամանակ տեղեկացվում է, որ մրցութային մասնակցելու հա-մար ՀՀ քաղաքացիների ներկայաց-րած փաստաթղթերի պատճենները հետ չեն վերադարձվում:

